

"2025թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ" ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՄՐՑԱՇՐՋԱՆԻ

III ՓՈԻԼ

"2025թ. ՀՀ Լավագույն հաշվապահ" անվանակարգում հայտարարված մրցույթի 16-րդ պարբերաշրջանի ընտրական 3-րդ փուլը, որին ներկայացվում է 10 հարցից բաղկացած մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 20 միավոր):

Խնդրի ճիշտ պատասխանը կգնահատվի 10 միավոր՝ սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 10 միավոր):

Երրորդ փուլին ներկայացված առաջադրանքներից հնարավոր է վաստակել առավելագույնը 30 միավոր:

Երրորդ փուլին ներկայացված առաջադրանքներից ամենաբարձր միավորներ վաստակած մասնակիցների անունը, ազգանունը կտպագրվի ամսագրի հաջորդ համարում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Երրորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2025թ. սեպտեմբերի 28-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2025թ. սեպտեմբերի 29-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, Լավագույն հաշվապահ միջազգային խորհրդանիշով ոսկեգր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2026 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

"2025թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ"

ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈԻԼԻ

ՀԱՐՑԱՇԱՐԸ

Հարց 1. Կազմակերպությունը ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձին վճարել է

եկամուտ ապրանքի տեսքով: Եկամտային հարկը հաշվարկվում է.

ա. 20 %,

բ. 10 %,

գ. 5 %:

Հարց 2. Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող ՀԿ-ն Օրենսգրքով սահմանված

կարգով ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ դիմում է ներկայացրել:

Գյուղատնտեսական գործունեության մասով ԱԱՀ վճարելու է.

ա. 0 %,

բ. 20 %.

գ. գյուղատնտեսական ապրանքների իրացումն ազատված է ԱԱՀ-ից:

Հարց 3. Չափագրումների ընթացքում խախտումների հայտնաբերման դեպքում նույն հարկային տարվա ընթացքում կատարող է կիրառվել տուգանք.

ա. 3 անգամ,

բ. 1 անգամ.

գ. 2 անգամ:

Հարց 4. Համաձայն ՀՀՄՄ 20 "Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում" ստանդարտի, շնորհների հետ վերադարձումը այն չափով, որքանով վերադարձման ենթակա գումարը գերազանցում է դեռևս եկամուտ չճանաչված (հետաձգված) կրեդիտային մնացորդը, ճանաչվում է որպես՝

ա. հետաձգված ծախս,

բ. հետաձգված եկամուտ,

գ. եկամտի ճշգրտում,

դ. ծախս:

Հարց 5. Համաձայն ՀՀՄՄ 21 "Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները" ստանդարտի, հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ՝

ա. արտարժույթով դրամային և ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը,

բ. արտարժույթով դրամային և ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով,

գ. արտարժույթով դրամային հոդվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը, իսկ ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով.

դ. արտարժույթով դրամային հոդվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով, իսկ ոչ դրամային հոդվածները ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը:

Հարց 6. Համաձայն ՀՀՄՄ 7 "Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին"

**ստանդարտի, արտադրական կազմակերպությունում նշվածներից որը չի
համարվում ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝**

- ա. ոչ նյութական ակտիվների ձեռք բերումը,
- բ. այլ կազմակերպության բաժնետոմսերի վաճառքը ,
- գ. տրամադրված փոխառությունների դիմաց տոկոսների ստացումը,
- դ. ստացված փոխառությունների դիմաց տոկոսների վճարումը:

Հարց 7. Համաձայն ՀՀՄՄ 8 "Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ կամ վնաս, էական

**սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության
մեջ" ստանդարտի, արտասովոր հոդվածները՝**

- ա. Եկամուտներ կամ ծախսեր են, որոնք առաջանում են այն դեպքերից կամ գործարքներից,
որոնք հստակ տարբերակվում են կազմակերպության սովորական գործունեությունից,
հետևաբար չի ակնկալվում դրանց հաճախակի կամ պարբերական կրկնվելը,
- բ. ակտիվներ կամ պարտավորություններ են, որոնք առաջանում են այն դեպքերից կամ
գործարքներից, որոնք հստակ տարբերակվում են կազմակերպության գործառնական
գործունեությունից, հետևաբար չի ակնկալվում դրանց հաճախակի կամ պարբերական
կրկնվելը,
- գ. գործառնական չհանդիսացող գործունեությունից առաջացած եկամուտներն են և ծախսերը,
- դ. այն դեպքերից առաջացած եկամուտներն են և ծախսերը, որոնք իրավական տեսանկյունից
կդիտվեն որպես ֆորս-մաժոր:

Հարց 8. Տրամադրված կարճաժամկետ փոխառության գծով տոկոսային եկամտի

հաշվեգրման արտացոլում.

ա. Դեբետ 238

Կրեդիտ 627

բ. Դեբետ 222

Կրեդիտ 238

գ. Դեբետ 235

Կրեդիտ 238:

Հարց 9. Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների վաճառքի արտացոլում.

ա. Դեբետ 221

Կրեդիտ 621,

բ Դեբետ 221

Կրեդիտ 622,

գ. Դեբետ 221

Կրեդիտ 627:

Հարց 10. Ապրանքների վաճառքի գծով անհուսալի դեբիտորական պարտքի դուրս գրում.

ա. Դեբետ 221

Կրեդիտ 223

բ Դեբետ 223

Կրեդիտ 221

գ. Դեբետ 612

Կրեդիտ 221

"2025Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ"

ՄՐՑՈՒՅԹԻ 16-ԴՆ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈԻԼԻ

ԽՆԴԻՐԸ

Կազմակերպությունը 2025թ-ի հուլիս ամսին իր աշխատակիցների և ֆիզիկական անձանց հետ կատարել է հետևյալ գործառնությունները

1. Կազմակերպությունը ֆիզիկական անձից գնել է հասարակական նշանակության շինություն՝ անշարժ գույք ընդհանուր 36,800 հազար ՀՀ դրամով՝ որից հողամասի արժեք 8,250 հազար ՀՀ դրամ է, իսկ շենքի արժեքը 28,550 հազար ՀՀ դրամ:
2. Կազմակերպությունը ֆիզիկական անձին վճարել է 250,000 ՀՀ դրամ որպես բաց թողնված եկամտի փոխհատուցման գումար և 360,000 ՀՀ դրամ վնասի փոխհատուցում:
3. Կազմակերպությունը իր աշխատակցի առողջության ապահովագրություն համար վճարել է տարեկան 180,000 ՀՀ դրամ:

4. Կազմակերպությունը իր աշխատակցին ՀՀ տարածքում գործուղման համար վճարել է օրապահիկ 5 օրացուցային օրվա համար 75,000 դրամ:

Պահանջվում է հաշվարկել կազմակերպության հուլիս ամսվա համար գործարքներից առաջացող պետական բյուջե վճարվող եկամտային հարկի գումարը:

Պատասխան

1. Եկամտային հարկ 2,855,000 ՀՀ դրամ,
2. Եկամտային հարկ 62,500 ՀՀ դրամ,
3. Եկամտային հարկ 1,250 ՀՀ դրամ,
4. Եկամտային հարկ 3,750

Պատասխան 2,922,500